Կան նաև Դպրոքեան ճիւղերը 1. Գերականութիւն, լեզուագիտութիւն, բանափրութիւն. 2. Ճարտարանութիւն, բեմբասացութիւն: 3. Բանաստեղծութիւն.

### 34.

Մարսողութեան գլխաւոր գործարանն է ստամոքսը : Մնունդը նախ բերնի մէջ կը ծամենք, կը մանրենք, լորձունքով կը թրջենք ու կը կլլենք, ըմբանէն կ'անցնի, որկորէն ստամոքս կ'իջնէ ուր հիւթի մը ազգեցութեամբ, կերակուրը կը լուծուի, և չորս հինգ ժամ վերջը գորշ ու միատեսակ խմոր մը կ'ըլլայ (խախաց): Այս խմորը բարապան կամ սոր կոչուած ծակէն կը մտնէ աղեծոցը, հոն ալ լեզի նիւթի մը և պանկրատի հիւթին հետ խառնուելով՝ աղիքին մէջ կը մտնէ. այն ատեն ձեռող անօթներ խախացէն կը ծծեն կ'առնեն մննդարար նիւթերը (մամաց) և կը խառնեն արիւնին : Անպէտ նիւթերը հետզհետէ թանձրանարով ու սեւնալով՝ կ'իջնէն նախաղիքին մէջ և սրբանէն դուրս կ'ելլեն իբրեւ աղբ :

### 35.

1. Բանաստեղծութիւն կը կոչուի այն արուեստը որով գրուածքի մը իմաստը՝ բարձր, բառերը՝ ընտիր, լեզուն՝ խնամուած կ'ըլլան, և՝ վսեմ ու կենդանի նկարագրութեանն ու գեղեցիկ բացատրութեանը չնորհիւ՝ գրութեան առարկան պատկերի պէս կ'երեւայ կարդացողին :

2. Արձակ է այն գրութիւնը՝ որ չափով ու յանդով գրուած չէ :

3. Ոտանաւոր կ'ըսուի այն գրուածքը՝ որուն մէջ վանկերը որոշ խումբերու բաժնուած են և տողին ծայրի բառերը գրէթէ մի և նոյն հնչումը ունին : Ոտանաւոր գրելու արուեստը կ'ըսուի տաղածախուրին :

4. Գ. Նարեկացի, Հ. Արսէն, Պ. Դուրեան, Թբէրդեան, Մ. Աճէմեան, Ա. Ծատուրեան, Սլվասլան: 400. Ռւզիւփ

36.

Հարցումներուն պատսախաններն են .

1. Երականութեան մէջ թիւը երկուք է :
2. Հոլովը վեց է :
3. Մամն բանին տասն է :
4. Գոյականը երկու տեսակ է :
5. Ածականը հինգ տեսակ է :
6. Բայց նոյնպէս՝ հինգ տեսակ :
7. Շաղկապը եօթը տեսակ . (ժամանակի, պատճառի, հակադրութեան, բաղդատութեան, եղանակի, թէութեան, քանակութեան) :
8. Դերբայը՝ երեք տեսակ :
9. Մակրայը՝ ինը տեսակ :
10. Միջարկութիւնը 14 տեսակ (Տես Տարրական Քերականութիւն, էջ 47 կանոն 124) :

37.

Մարդկային կմախքը մինչեւ 250 ոսկոր կրնայ ունենալ, որոնց գլխաւորներն են .

1. Ճակատ :
2. Գագաթոսկը :
3. Քունկոսկը :
4. Ծործորոսկը :
5. Վերի կզակ :
6. Վարի կզակ :
7. Անրակ :
8. Վզի ողեր :
9. Բազկոսկը :
10. Ուսոսկը :
11. Կրծոսկը :
12. Կողեր :
13. Ճաճանչոսկը :
14. Ափ և մատներ :
15. Դաստակ :
16. Ողնաշար :
17. Կոնք .
18. Բարձ կամ զըստոսկը :
19. Ոլոք :
20. Կոճ :
21. Ոտքի դաստակ :
22. Ոտքի մատներ :
23. Կրունկ :

38.

1. Երամը անշուք՝ ճերմակ թիթեռ մ'է որ մարդուս շատ օգտակար է, ասոր համար շերամը կը բուծանեն, մանաւանդ Հնդկաստան, Փոքր Ասիա (Պիլէճիկ, Պրուսա, ևայլն) :
2. Տուն հայրենիքը Զինաստան է և հին ատեններ մեծագին մետաքսը Զինաստանի գլխաւոր բերքն էր :
3. Դա-

րուն, երկու Յոյն կրօնաւորներ շերամին ձուերը անամէջ գաւազաններու մէջ դնելով՝ Պոլիս բերին, ուրիէ ալ տարին Յունաստան, Խտալիա, մրանսսա :

2. Եերամին հունտը մանր հատիկ մ'է, որ ձու կ'ըսուի . այս հաւկիթէն կը ծնի թրթուր մը, որ հետզհետէ կը մեծնայ և մինչև մէկ ամիս 3—4 հարիւրդամէթր կ'աճի և չորս անգամ կը փոխէ խորիսը : Յետոյ երեք չորս օրուան մէջ բոժոն կը շինէ և անոր մէջ կը մնայ . այն ատեն կը կոչուի հարսնուկ : Բոժոժին մէկ կողմը ծակելով դուրս կ'ելէ իբրեւ թիթեռ : Որձ կամ արու թիթեռը բոժոժէն կամ խոզակէն դուրս ելլելուն, կը սկսի էզը փնտուել : Մէն մի էդ 500ի չափ ձու կը ծրտէ, և անկէ ետքը, թէ՛ արուն և թէ՛ էզը կը մեռնին :

3. Եերամին որդը կը սնանի թութի տերեւով։ Ան կը պատրաստէ մետաքսը, որ առուատուրի և ճարտարարուեստի շահարեր նիւթ է :

39.

Ահաւասիկ քանի մը առածներ (\*) .

1. Ածան հայր կուկուան կ'ըլլայ . — Բան դիտցողը, արժանիք ունեցողը, չի կրնար ծածկել իր արժանիքը :

2. Վազան ձին իր կերպ կ'աւելցնէ . — Աշխատող մարդը աւելի կը շահի և հանդիսա կ'ապրի :

3. Գլուխող քարը հիմ չի բոներ . — Այն որ յաքատեւութեամբ չ'աշխատիր, և շուտ շուտ իր գործը, զբաղումը, պաշտօնը կամ տեղը կը փոխէ, անիկա չի կրնար հարստանալ :

(\*) Դաստուն կը պահանջէ որ աշակերտներն ալ զրեն ուրիշ առաջնորդ և անոնց իմաստը տան :

4. Աեցուն հասկը գլուխ չի տնկեր . — Բան  
գիտողը լուրջ ու համեստ կ'ըլլայ :

6. Ես աղա , դուն աղա , ջադա՞ցք ով աղայ .  
— Եթէ ամէն մարդ հանգիստ ընել ուզէ , պարապ  
նստի՝ ո՞վ պիտի աշխատի , բան սորվի , ո՞վ պիտի  
հոգայ ապրուստն ու սնունդը որուն պէտք ունիւ :

7. Տունը սատանայ , դուրսց քահանայ . — Ներ-  
քին կեանքին մէջ չարութիւն կ'ընէ , իսկ դրսէն  
շատ բարի կ'երեւայ :

#### 40.

Առողջապահութեան գլխաւոր պայմաններն են .

1. Զափէն աւելի ուտելէ ու խմելէ և ամէն տե-  
սակ շուայտութենէ զգուշացիր : 2. Անմարսելի  
կերակուրներ մի՛ ուտեր : 3. Կերած տեղդ , գոր-  
ծելու և պառկելու սենեակդ միշտ մաքուր օդ-  
գտնուի . ամառը՝ միշտ , իսկ ձմեռը ստէպ բա՛ց  
պատուհանդ : 4. Յանկարծական ցրտառութենէ  
զգուշացի՛ր : 5. Քրտընած՝ պաղ ջուր մի՛ խմեր :  
6. Սասարիկ տաքութենէ զգուշացի՛ր : 7. Զգա-  
յարանքդ չափաւոր գործածէ . մութին մէջ կամ  
շատ նուրբ աշխատութիւններով աչք մի՛ յոդ-  
նեցներ : 8. Ուժէդ վեր գործ մի՛ ըներ . ծանր  
բան մի՛ վերցներ : 9. Քեղի չվերաբերող գործե-  
րու , կուիներու մէջ մի՛ նետուիր : 10. Եթէ ա-  
ռողջութիւնդ խանգարի , բժիշկի դիմէ անյապաղ ,  
և անոր խրատին անսա՛ :

#### 41.

Առակներու խորագիրն ու անոնց բարոյականը .  
(Տե՛ս Մազկաքաղ Հաւաքածոյ , 17<sup>o</sup> Հրատա-  
րակութիւն Ս. Դաւթեանի ) :

Աքաղաղ եւ մարգրիտ . — Տգէտ մարդը չի  
կրնար բանի մը օգտակարութիւնը հասկնալ :

Ճպուսն ու մրջին . — Ծոյլ ու դատարկ տղան ,  
երբ ծերութեան համնի , թշուառ կ'ըլլայ :

Տղայ եւ մեղու . — Անփորձ մարդը իր տգի-  
տութեան պատիմը կը կրէ վերջապէս :

Մանուկ եւ օձ . — Զգիտցած բանիդ մէջ մի  
մտներ :

Մեղուն ու աղաւնին . — Երբ բարիք ընես , փո-  
խարէնը կը գտնես :

Կատու եւ սոխակ . — Ի՞նչ օգուտ ունի շատ  
գիտութիւնը , եթէ չես կրնար արժեցնել :

Մոռկն ու կովը . — Պարծենկոտ մի՛ ըլլար :

Ընկուզի ծառը . — Հպարտացողը կը զզայ :

Հովիր ու մոծակ . — Բարիք ընողը երբեմն ալ  
չարիքով կը վարձատրուի :

Հեղեղ ու վտակ . — Ամբարտաւան ու մեծա-  
խօս մարդուն վախճանը շուտ կուգայ :

Դաշտի ծաղիկ . — Լաւ ընկերներ ընտրելու է :

Գիւղացին ու աղուն . — Խելացի մարդը լաւ  
գիտէ իրեն օգուտ մը հանել ամէն առիթէ եւ  
տգէտներուն անշահ խրատէն չի խաբուիր :

Երկու ճնճդրսկներ . — Եթէ բարիք ընել կ'ու-  
զես , ջանա՛ ժամանակին հասցնել պէտք ունեցողին :

#### 42.

1. Զերմաշափը բնագիտական գործիք մ'է ,  
որով տեղի մը կամ մարմինի մը տաքութեան աս-  
տիճանը կ'որոշուի : Զերմաշափը կը բաղկանայ ա-  
պակիէ՝ երկու ծայրը գոց և մէկ ծայրը ուռած  
բարակ խողովակէ մը , որուն մէջ անդիկ դրուած

կայ . քանի՛ օդը տաք ըլլայ , սնդիկը կ'ընդլայնի և հետեւաբար կ'երկննայ խողովակին մէջ , որուն դուրսի կողմը հաւասարաչափ աստիճաններ նշանակուած են : Զերմաչափին (հարիւրամասնեային) մէջ զերո աստիճանը կը համապատասխանէ հալող սառի բարեխառնութեան , իսկ եռացող ջուրինը կը ներկայացուի հարիւր թիւով կամ աստիճանով :

2. Օդապարիկը կերպասէ կամ ուրիշ անթափանց նիւթէ մը շինուած գունտ մ'է , որուն մէջ կը լեցնեն օդէն թեթեւ կազ մը (օրինակ ջրածին) , և որ կրնայ օդին մէջ բարձրանալ : Գունտին կը կցուի նաւակ մ'ալ , որուն մէջ կը նստին մարդիկ (օդանաւորդ) :

Օդապարիկին հնարիչն են Ստեփան և Յովաչփ Մոնկոլֆիէ անուն Գաղղիացիները (1783) :

### 43.

1. Ժխտական շինող նախադաս մասնիկներն են ան , ամ , ապ , տ , չ , տժ կամ դժ . Օրինակ՝ անելք , ամբարիշտ , ապերախտ , տքէտ , յտես , տգոյն , դժգոն :

2. Ածանցական մասնիկ կ'ըսուին այն զերերը , որ արմատ բառի մը ծայրը (սկիզբը կամ վերջը) կը կցուին , և անոր իմաստը քիչ կամ շատ կը փոխեն . ինչպէս , խնդոր բառին ենի մասնիկ կը կցենք (խնձորենի) և կը նշանակէ խնձորի ծառ :

Ծառ բառին կը կցենք աստան , կ'ըլլայ ծառաստան և կը նշանակէ շատ ծառ եղած տեղ , և նշանակած շատ ծառ :

3. Բարդ կ'ըսուի այն բառը , որ երկու արմատ բառերէ կազմուած է . երբ բառի մը ածանցական մասնիկ մը կցենք կ'ըլլայ ածանցեալ բառ :

4. Յետադաս ածանցական մասնիկներն են . ական , ային , աւոր , ուստ , եղեն , եայ կամ է , եան , եղ , ուս , ենի , ուն , ատ , կոտ , որդ , ոց , անց , արան , ստան , նոց , զի , եցի , ցու , իկ , ակ , ուկ , ատ , ունի , անուշ :

Ածանցական մասնիկներ են նաև .

Գին , եղի , ի , ին , կի , ծու , նակ , նի , ոսի , ու , որակ , ունի , ուց , չէր , պան :

Ան , անք , ած , աց , ում , ուրին , ուստ , ինն , եստ , ուցք , ոյր , ոյց , ունդ , ուրդ , եայ , ուք , էր , ող , իջ , օն :

### Գ. ԳԼՈՒԽԻՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԸ

1. Գիծերուն տեղ յարմար բացարձակ կամ դասականը դրի :

1. Մէկ տարիին մէջ կայ տասներկու ամիս , յիսուն երկու շաբաթ , երեք հարիսր վարսունը հինգ օր : 2. Մէկ օրը կ'ընէ քանի ջորս ժամ , մէկ ժամը վարսուն վայրկեան , ու մէկ վայրկեանը վարսուն երկլայրկեան . ուրեմն մէկ ժամն է օրուան մեկ քանի ջորրորդ ժամը , մէկ վայրկեանը մեկ ժամուան վարսուներորդ ժամն է , և երկլայրկեանն ալ վայրկեանին մեկ վարսուներորդ ժամը :

3. Ս. Ծնունդի տօնը կուգայ յունվարի վեցերորդ օրը : 4. Մեկ բերան ունինք , երկու ականջ , երեկու աչք , երկու ձեռք . մէն մի ձեռք կազմուած է հինգ մասներէ : 5. Եօրը մահացու մելքեր կան և եօրն առաքինութիւն : 6. Երաժշտութեան մէջ եօրը ձայնանիշ կայ : 7. Ուրբաթը շաբթուան վեց-

Երրորդ օրն է : 8. Թուաբանութեան մէջ զորս  
հիմնական գործողութիւն կայ : 9. Միջինքը մեծ  
պահքի քանից չորսերրորդ օրն է : 10. Տասը մասն  
բանի կայ քերականութեան մէջ : 11. Ածականը  
երրորդ մասն բանին է : 12. Եօրը ձայնաւոր գիր  
կայ այրութենին մէջ և քանից ինը բաղաձայն :  
13. Մէկ ֆրանքը կ'արժէ հարիւր սանդիմ : 14.  
Բենիամին՝ Յակոբ նահապետին տասներկուերրորդ  
որդին էր :

**Զ.** Գոյականներուն յարմար ածականներ տուի .

Ազնիւ տղայ, մեծ գլուխ, զարդարուն գըլ-  
խարկ, ճերմակ թաշկինակ, օդաւէտ գեղ, խո-  
րամանկ ալղուէս, օդտակար դաս, բարի մարդ,  
բարեձե կօշիկ, սուր դանակ, հանգստաւէտ տուն,  
բարձր գագաթ, շքեղ բնութիւն, աշխատասէր  
աշակերտ, հոչակաւոր բժիշկ, գորովագոռէթ մայր,  
անուշահոտ վարդ, աղօտ լուսին, կիզիչ արեգակ,  
զուարճալի պատմութիւն, թանկագին արամանդ,  
փայլուն կրակ, կատաղի առիւծ, խոնաւ օդ,  
հասուն տանձ, օթեկ հաց, մութ բանսո, պաղ  
հով, բարձր ճակատ, կրակոտ նայուածք, զար-  
դարուն պարտէզ, ալեկոծ ծով, նաւարկելի գետ,  
անուշ ջուր, սև մելան, կարծր երկախ, արագըն-  
թաց ձի, համբերատար էշ, բաթերեր հող, պըտ-  
զատու ծառ :

**Յ.** Ածականներուն քով գոյական մը դնելով  
խօսք մը շինեցի .

Անկեղծ բարեկամ, ծանր քայլ, գեղեցիկ տղայ,  
կակուղ սպունդ, վայրենի խող, կանաչ խոտ,  
փայլուն կրակ, փոքր տուն, մաքսւր աման, թաց

տախտակ, խիստ մարդ, մեղմ օդ, աշխատասէր  
աշակերտ, չոր ծառ, կարծր քար, սրածայր զմե-  
մն, ուղիղ ճամբայ, խոր փոս, գոհ սիրտ, հա-  
մեղ կերակուր, ծոյլ տղայ, կոր գիծ, անհամ  
աղցան, ախորժելի պատմութիւն, ապերախտ ծա-  
ռայ, թուխ կին, գիտուն մարդ, աղէկ թուղթ,  
կարմիր վարդ, խարտեաշ մաղ, ընտիր մելան,  
աիրելի քոյր, հաստ չուան, ճերմակ փետուր,  
ճեղ պատանի, խուլ ականջ, կլոր գնտակ, օգ-  
տակար կենդանի, խորամանկ աղուէս, ահար-  
կու ձայն, խոնաւ հող, անշարժ կալուած, հան-  
դարտ ծով, ճարտար բժիշկ, թթու պտուղ, նի-  
հար մարդ, գաղտնի սէր, ուրախ դէմք, առատ  
ջուր, ստախօս տղայ, հասուն պտուղ, թարմ  
հաց, դառն արտասուք, քառակուսի տուփ :

**Ա.** Ածականներուն քով դրի երկերկու յարմար  
գոյականներ .

Ազնիւ սիրտ, ազնիւ ծառայ | Կարծր քար,  
կարծր մարմին | Կանաչ խոտ, կանաչ տերեւ |  
Խիստ վարմունք, խիստ բնաւորութիւն | Դա-  
ժան դէմք, դաժան նայուածք | Սնպատիւ կեանք,  
անպատիւ մարդ | Նուիրական մատեան, նուի-  
րական տօն | Ուժգին փոթորիկ, ուժգին հով |  
թարմ հաց, թարմ միս | Համբ աղջիկ, համբ  
լեզու | Շնորհալից զաւակ, շնորհալից նայուածք  
| Խոր անկիւն, խոր լուսութիւն | Քաղցր լեզու,  
քաղցր դէմք | Փափուկ մորթ, փափուկ մար-  
մին | Հաւատարիմ ծառայ, հաւատարիմ բարե-  
կամ | Ապերախտ աշակերտ, ապերախտ տղայ |  
Ջուտ օդի, զուտ մետաղ | Սաստիկ բարկու-

թիւն , սաստիկ փոթորիկ | Դառն ժպիտ , դառն  
պտուղ | Տկար գաղափար , տկար կազմ | Երկ-  
չոտ նապաստակ , երկչոտ կրեայ | Առատ անձ-  
րեւ , առատ հաց | Վսեմ տեսարան , վսեմ խօսք |  
Ցուրտ ձմեռ , ցուրտ հոլ :

**5.** Առարկալի անունները փոխեցի էակի ա-  
նուններու .

Թանկագին բարեկամ , օգտակար միջատ , երկ-  
չոտ տղայ , վտանգաւոր անասուն , անաչառ դա-  
տաւոր , առաւօտեան աքաղաղ , լուրջ կին , առա-  
քինի աղջիկ , կարճ մարդ , ճերմակ շուն , կաս-  
կածոտ ընկեր , ճարտար բժիշկ , հեռաւոր բարեկամ ,  
կարմիր ձի , սուտ վկայ , զուարթ մանուկ , քաղցր  
խօսակից , սիրուն գառնուկ , լուռ ու խաղաղ  
ճամբորդ , նշանաւոր քաղաքացի :

**6.** Էակի անունները առարկալի անուններու  
փոխեցի .

Սուտ աշխարհ , կեղծաւոր խօսք , սպիտակ ձիւն ,  
տժգոյն երես , կրակոտ նայուածք , հաւատարիմ  
սիրտ , գեղեցիկ պատկեր , պարկեշտ վարմունք ,  
աշխոյժ բնաւորութիւն , հեռաւոր երկիր , անկեղծ  
դգացում , առաքինի գործ , կարմիր թուշ , խար-  
տեաշ մազ , զուարթ դէմք :

**7.** Բառերուն ուրիւն մասնիկը ջնջեցի .

Առաքինի , մանուկ , յաղթանակ , պարտք ,  
զգաստ , շուայլ , հպարտ , ծանր , իշխան , դառն ,  
նուրբ , սուրբ , Քրիստոնեայ , հերետիկոս , բողո-  
քական , կաթոլիկ , յայտարար , պատգամաւոր ,  
խայտառակ , շահախնդիր , ծեր , երանի , պարզ →

մեծ , աղնիւ , շիլ , խուլ , գութ , կծծի , ագահ ,  
որկրամոլ , ողջախոն , բղջախոն :

**8.** Բառերուն կցեցի ուրիւն մասնիկը .

Անմտութիւն , անպատճութիւն , փայլունու-  
թիւն , չքեղութիւն , չփոթութիւն , վտանգաւո-  
րութիւն , գոռողութիւն , հպարտութիւն , վեհանձ-  
նութիւն , պարկեշտութիւն , տգեղութիւն , սա-  
կաւութիւն , յաջողութիւն , քրիստոնէութիւն ,  
հրէութիւն , առաքելութիւն , առաքինութիւն ,  
հանձարեղութիւն , քերականութիւն , պաշտօնէ-  
ութիւն , պատշաճութիւն , ստուգութիւն , իրա-  
կանութիւն , Աստուածութիւն , դառնութիւն ,  
զուարթութիւն , միրութիւն , բարութիւն , զանա-  
զանութիւն , արդարութիւն , ճշգութիւն , եկե-  
ղեցականութիւն , կրօնաւորութիւն , պատրիար-  
քութիւն , եպիսկոպոսութիւն , կաթողիկոսութիւն ,  
պերճութիւն , պետութիւն , հաստատութիւն , է-  
ութիւն , հարսնութիւն , վիեսայութիւն , բնութիւն ,  
աղնուութիւն , հաւատարմութիւն :

**9.** Ածականները գոյականի փոխուած են .

Եղբայրական սէր , յաւիտենական ճշմարտու-  
թիւն , մայրական խնամք , յանցաւոր մարդ , ման-  
կական խաղ , գիշերային մթութիւն , տղայական-  
անմեղութիւն , կրակոտ վրէժիսնդրութիւն , հայ-  
րական ծերութիւն , մայրական բարեսրատութիւն ,  
թթու քացախ , եղբայրական չնորհ , երկնային-  
կապուտութիւն , չար դեւ , հրաշալի գեղեցկու-  
թիւն , հիւրասէր Տաճիկ , կառավարական կեղ-  
րոն , կնոջական աղնուութիւն , փափուկ աղջիկ ,  
պարզ գեղջուկ , ընտանեկան համեստութիւն :

**10.** Եերանունները յարմար հոլովներով դրի .

1. Հայրա քեզ կը սիրէ : 2. Տղան ինձմէ կը պախնայ : 3. Եղբայրս զանոնք հրաւիրեց : 4. Քոյրս քեզ մեր տունը կը հրաւիրէ : 5. Վիզս պլուեցաւ ու կը համբուրէր զիս : 6. Դուք մոռցաք մեզ : 7. Զեզ հիւանդ կը կարծէր . 8. Զանոնք միսիթարելու գացի : 9. Քեզ հոն տեսայ : 10. Աղէկ ընդունեցինք զանոնք : 11. Զեզմէ գիրք մը պիտի ուզեմ : 12. Եղբայրդ ծեծեց զիս : 13. Գիրքերը կը զուարձացնեն մեզ : 14. Ես անկէ չառի : 15. Քրիստոս ազատեց մեզ : 16. Սն բաժնուեցաւ ինձմէ : 17. Հօրաքոյրս սրդողեցաւ ինծի դէմ : 18. Մի՛ վախնար ինձմէ :

**11.** Յոքակիի վերածեցի խօսքերը .

Գառնուկները կը մայեն, կովերը կը բառաչեն, ձիերը կը վրնջեն, էշերը կը զռան, շուները կը հաչեն, կատուները կը նուան, դեղձանիկները կը դայլայլեն, սոխակները կը գեղգեղեն, գայլերը կ'ոռնան, առիւծները կը մռնչեն, օձերը կը սուլեն, ճանձերը կը բզզան, դրօնները կը փողփողեն, կրակները կը վառին, կը փայլին և կը մարին, առուակները կը դդջեն, պայտառները կը լուսնեն ձիերը, դուք կը զարմանայիք, մենք կը խօսէինք և դուք կը լսէիք, անոնք կը խաղան և դուք կ'աշխատիք, կը փափաքինք որ փորձէք այս գրիչները, պիտի նուազին, պիտի խեղդուէիք, և մենք փորձեցինք ձեզ ազատել . կ'աղաչենք, կ'աղաչէինք, աղաչեցինք, պիտի աղաչենք մօքերնուս որ մեզի հրաման տայ պտտելու, սպասուհները կ'աւլեն սանդուխները, պահապանները թող լաւ հսկեն :

**12.** Եզակիի փոխեցի խօսքերը .

Գործաւորը կը սրէ իր գործիքը . Աքաղաղը կը խօսի . Սպասուհին կոտրեց պնակը . Խոհարարը կը համեմէ աղցանը . Ծոյլ աշակերտը կը սիրէ խաղը և կ'ատէ ուսումը . Կը սիրեմ ու կը մշակեմ ծաղիկը . Սիրուն փոքր ծաղիկ, ինչ ալ անուշ կը բուրես . Այս շունը քեզ կը սիրէ և դուն կը ծեծես զայն . Տղա՛ս, օ՛ն, խաղա՛, վազէ՛, բայց շատ աղմուկ մի հաներ . Մարդ կը կտրէ, կը տաշէ, կ'աղայ, կը թրէ, կ'եփէ, բայց չ'ստեղծեր և բնաւ չպիտի ստեղծէ, ամէնէն մեծ հանձարը ճանձ մը անգամ չի կրնար ստեղծել . Մի վստահիր անոր որ չի վստահիր մարդու :

**13.** Խօսքերն ամբողջացուցի առաջինին համեմատ .

1. Մարդ կը քալէ , կը վազէ , կ'ելէ , կ'իջնէ , կը մագլցի , կը սահի , կը սողայ , կը լողայ , կը խոյանայ , կ'ուտէ , կը խմէ , կ'երթայ , կուգայ , կ'ապրի , կը մեւսնի :

2. Ո՛վ մարդ , դուն միշտ քալած ես, վազած ես, ելած ես, իջած ես, մագլցած ես, սահած ես, սողացած ես, լողացած ես, խոյացած ես, կերած ես, խմած ես, գացած ես, եկած ես, ապրած ես, մեռած ես :

3. Ո՛վ մարդ , դուն միշտ պիտի քալես , պիտի վաղես , պիտի ելլես , պիտի իջնես , պիտի մագլցիս , պիտի սահիս , պիտի սողաս , պիտի լողաս , պիտի խոյանաս , պիտի ուտես , պիտի խմես , պիտի երթաս , պիտի գաս , պիտի ապրիս , պիտի մեռնիս :

4. Մկիզքէն ի վեր քալեցիր , վազեցիր , ելար .

իջար, մագլցեցար, սահեցար, սողացիր, լողացիր, խոյացար, կերար, խմեցիր, գացիր, եկար, ապրեցար, մեռար :

5. Ո՞վ մարդ, քալէ՛, վազէ՛, ելի՛ր, իջի՛ր, մագլցէ՛, սահէ՛, սողա՛, լողա՛, խոյացի՛ր, կե՛ր, խմէ՛, գնա՛, եկո՞ւր, ապրէ՛, մեռի՛ր :

6. Ո՞վ չի դիտեր թէ ես պիտի քալեմ, պիտի վազեմ, պիտի ելեմ, պիտի իջնեմ, պիտի մագլցեմ, պիտի սահեմ, պիտի սողամ, պիտի լողամ, պիտի խոյանամ, պիտի ուտեմ, պիտի խմեմ, պիտի երթամ, պիտի գամ, պիտի ապրիմ, պիտի մեռնիմ :

#### 14. Հարցումներուն պատասխանեցի .

Գրիչով կը գրեն, զմելինով կը տաշեն, մատիւտով կը գծեն, դանակով կը կարեն, ասեղով կար կը կարեն, խթանով կը քալեցնեն եղները, մուրճով երկաթ կը ծեծեն, լողարանով կը լողան, սայլակով բեռ կը տանին, բանալիով դուռ կը բանան, կանգունով կը չափեն, կշիռով կը կշռեն, երկանաքարով ցորեն կ'աղան, սանգուխով վերի յարկը կ'ելլեն, ունելիով կրակ կը բըռնեն, փքոցով կրակ կը վչեն, հողմանարով կը հովահրեն, ջանրակով բուրդ կը մանեն, իւրով բուրդ կ'ոլորեն, նազուկով դերձան կը փաթթեն, ձգախէժով կը մաքրեն մատիան բիծերը, բանով հողերը կը հերկեն, բրիչով հողը կը փորեն, մանգաղով խոտ կը հնձեն, միրատով կը կարեն, պատառաքաղով կերակուր կ'ուտեն, դգալով ապուր կը խմեն, շերեփով կերակուր կը լեցնեն, դերձանով կար կը կարեն, բուրդով կերպա, դուլպայ, անկողին կը շինեն. դոյլով ջուր կը հանեն հորէն, ցնցուղով պարտեղ կը ջրեն :

15. Խօսքերը ծխտականի փոխեցի .

1. Ո՞վ չի տեսներ զիս : 2. Նշան չի լսեր քուձյնդ : 3. Ո՞րչափ չես ուտեր : 4. Այսօր զուարթ չեմ տեսներ ձեզ : 5. Մի՛ խաղաք շարունակ : 6. Դասատուն ձեզ չկանչեց : 7. Շուտ մի ընկեր : 8. Ասեղով փայտ չե՞ն կտրեր : 9. Ո՞վ չէ կերեր : 10. Այդ բանն ես չըրի : 11. Ծովը չի փրփրիր : 12. Մերթ չես որոտար, մերթ չես ամպեր, մերթ չես մթներ մուայլ, մերթ չես տեղար անձրեւ : 13. Բժիշկը հիմա չի դար : 14. Մի՛ տանիր մեզ փորձութեան : 15. Անպատառմ վիշտ մը չեմ զգարու : 16. Մի՛ ուտեր, մի՛ լսեր, մի՛ պատուեր, մի՛ քալէք, մի՛ առնէք, մի՛ ողբաք, մի՛ ըլլար, մի՛ բերեր, մի՛ տանիր, մի՛ քաշեր, տեսած չեմ, մի՛ թողուր, մի՛ բրդեր, չի զարներ, մեռած չէ :

#### 16. Խօսքերը հաստատական ըրի .

1. Քեզի նման քիչեր տեսած եմ : 2. Մակկը ըրէք անոր խօսքին : 3. Միթէ պիտի ուզէ : 4. Կը կարծեմ թէ կը մերթէ : 5. Արգեօք պիտի լսե՞մ քու ձայնդ : 6. Շատ հեռու դաշէք : 7. Իմ քովս եկուր : 8. Թող ձաթի : 9. ձաթէ՛ : 10. Երեսէ ձգեցէ՛ք զինքք որ մեռնի : 11. Կ'ընդունիս, այնպէս չէ : 12. Վէպ կը կարդա՞ք : 13. Ինչո՞ւ թարգմանած էք : 14. Պիտի կարդա՞ս Աւետարան : 15. Կը կարծեմ թէ բարիք պիտի ծնի այդ աշխատութենէդ : 16. Կրնամ համնիլ ետեւէդ : 17. Լսէ՛, 18. Տարէ՛ք, կրնամ իրմէ զուրկ մեալ : 19. Այս տղե՞կն ալ կը հոգար : 20. Կարկտան կ'ուզէ՞ք :

#### 17. Բառերուն տեղ նոյն նշանակութիւնը ունեցող ուրիշ բառեր գտայ .

Ամուր, պատ, շուք, դող, ճամբորդ, բաժին, փառաւոր, միծ, պարապ, կլորակ, սոտակ, պատահիլ, շատախօսել, երերալ, տեսնուիլ, լալ, կանչել, համրել, թրել, հարուստ, պակաս, իմացնել, ուրախութիւն, ցաւ, ըսել, շոյել կամ գգուել, ուզել, անուշ, գիրք, վարժապետ, մութ, պոչ, թեւ, շառաչ, քար, պնակ, անկուղին, կանթեղ, մորթ, ինչք, աղքատութիւն, խելօք, քաջ, գէր, հանդարտ, փափուկ, չոր, շատակեր, կոշտ, քիչնալ, ամնալ, կարճել, մօտենալ, երթալ, փայլել, քշել, ածիլել, խաղալ, մաքրել, գլուխ ծռել, աղէկցնել, ինսամել.

## 18.

Բառերուն սահմանը տուի .

1. Երկնային մարմին՝ որ երկրին շուրջը կը դառնայ և արեւէն կ'առնէ իր լոյսը : 2. Տեղ մը ուրկից ջուր կը բխղի : 3. Լոյս տուող գործիք : 4. Թանձրամորթ, սանաւոր կենդանի մը որ կնձիթ ունի : 5. Ամէնէն խորամանկ կենդանին : 6. Գրելու գործիք : 7. Երկաթ մը որ ձիու ոտքին կը գամեն : 8. Ծառերով լեցուն ընդարձակ գետին : 9. Երկաթէ կամ փայտէ կարասի մը՝ ուրուն վրայ կը փուեն անկողինը : 10. Ծախելով կամ գնելով զբաղող մարդ : 11. Հողը մշակող մարդ : 12. Մեր նախահայրը : 13. Պատիկ շէնք մը՝ որուն մէջ կը նստին ցամաքի վրայ ճամբորդելու համար և զոր ձիերը կը քաշեն : 14. Կենդանի մը որ կուտկէն ունի : 15. Փայտ ձեղքելու գործիք : 16. Փոս մը՝ որուն մէջ մարդ կը թաղեն : 17. Տեղ մը ուր կ'աղօթեն :

19. Բառերուն տեղ նոյն իմաստը ունեցող ուրիշ բառ գտայ. (էջ 185, Գ. Վարժութիւն, Գիրք Աշակերտին) :

Փափաք, սուր, տալ, ձեռք, պագնել, կաթիլ, հովիւ, ծիւղ, լաց, աշխատանք, պարգեւ, թուղթ, զոհ, մութ, մազ, փայլուն, զրկել, բուրդ, անհաստատ, ճահիճ (մոր), ճայնաւոր, անզօր, գեղին, աշխոյժ, խեւ, շատախօս, աստանդական, այլազգի, վախկոտ, հպարտ, ոչինչ, ծաղկիլ, նողկալ, թաւալիւ, պլուիլ, գթալ, գոռոզանալ, զիզել, թաղել, ժողվել, ծածկել, լուր տալ, կենալ, հաստատել, սփռել, լսել, փութալ, անհոգ, խօսք, տաք, սէր, հաւկիթ, աշակերտ, յատակ, զրուցել, ճար, խօսք, գիր, երախայ, տանիք, գերի, վերջին, ճանձոյթ, շահ, շուտ :

20. Բառերուն սահմանը տուի .

1. Այն զգայարանքը որով կը տեսնենք : 2. Այն զգայարանքը որով կը լսենք : 3. Մատներուն ծայրը գտնուած պինդ բան մը : 4. Այն գործաւորը որ պատ կը շինէ : 5. Թուչուններու բնակարան : 6. Տունկի մը հողի տակ գտնուած մասը : 7. Երկաթի կտոր մը որ երկու առարկաներ իրար կը կցէ : 8. Գործիք մը որ կտրելու կամ տաշելու կը ծառայէ : 9. Քրիստոնէութեան նշանն է : 10. Եկեղեցին այն մասն է՝ ուր քահանան պատարագ կը մատուցանէ : 11. Անուշահոտ բոյս մ'է զոր եկեղեցիներու մէջ կը ծխեն : 12. Զօրավարի մը հրամանին տակ ծառայող : 13. Հող մը՝ ուր ծաղիկներ կը մշակեն : 14. Բոյս մ'է որուն չորցուած տերեւները մարդիկ կը ծխեն : 15. Հեղուկ

մը զոր կը խմենք : 16. Կենդանիներուն ամէնէն  
վեհանձնը : 17. Այն զգայաբանը՝ որով կը հոտո-  
տենք : 18. Այն կարասին՝ որուն վրայ կը ճաշինք :  
19. Ապրելէ դադրիլ, 20. Այն աստղը՝ որ աշխարհ  
կը լուսառոէ և կը տաքցնէ . 21. Տարիքը առած  
կին : 22. Եփած կաթին վրայի մասը : 23. Հա-  
մակրութիւն : 24. Շէնք մը՝ որով ծովու վրայ  
կը ճամբորգենք: 25. Հանքային նիւթ՝ զոր կերա-  
կուրին մէջ կը դնեն : 26. Նիւթ մը՝ որով թուղթ  
կը փաքցնեն : 27. Նիւթ մը՝ որով փայտը կը  
փաքցնեն : 28. Խոհանոցի աման մը կոթով՝ ո-  
րուն մէջ ձուկ, պատինձան, հաւկիթ, ձկնականի  
(միտիա) և ուրիշ ուտելիքներ կը տապկեն :

### 21. ԲԱՂԴԱՑՈՒԹԻՒՆ ԿԱՄՆՄԱՆ ԱՌԱՋՄԱՆ

Գիծերուն տեղ պատշաճ բառը դրի (Էջ 187).  
Մեղրի պէս անուղ . կաթի պէս ճերմակ . քա-  
րի պէս կարծր . առիւծի պէս վեհանձն, վարդի  
պէս անուշանոտ . արիւնի պէս կարմիր . չունի պէս  
հաւատարիմ . աղուէսի պէս խորամանկ . հրեշտա-  
կի պէս անմեղ . օձի պէս խորագիտ . ասլակիի  
պէս քափանցիկ . ովկիանոսի պէս ընդարձակ . ջու-  
րի պէս դիրահոս, ջինջ . գնտակի պէս կլոր .  
սողոմնի պէս իմաստուն . բուրդի պէս կակուղ .  
արեւու պէս պայծառ . քացախի պէս բրու . ասե-  
ղի պէս սուր . սոխակի պէս քաղցրաման . հայե-  
մի պէս փայլուն . թէլի պէս հոկայ . Սամիսնի  
պէս ուժով . աղաւնիի պէս նեզ . ծովու պէս ծա-  
ռալուն . ձիւնի պէս ճերմակ . ոսկիի պէս վայրուն .  
բամպակի պէս կակուղ . կապարի պէս ծանր . փե-  
տուրի պէս քերեն . Յորի պէս համբերոյ . օդի պէս  
քերեն . իշու պէս յամառ :

22. Բառերուն հականիշը գտայ (Էջ 189).

Խոնարհ, բութ (գուլ), ճշմարտախօս, անլի, երեկոյ,  
խօսրլ, օրհնել, մեռնիլ, ինդալ, մարել, վար-  
ձատրել, ուտիք, մօտենալ, բռնել, կապել,  
գոցուիլ, ծաղկիլ (փթթիլ), վերջ, ատելութիւն, սա-  
տանայ, ընդունիլ, աշխատասիրութիւն, քաղաքա-  
կիրթ, գովել, սիրելի, չուայլ, գոռող, հաստա-  
տական, լաց, առողջ, արի (անլիներ), անար-  
ժան, հակակարծիք, լեցուն, կանգնել, կեղծա-  
ւոր, ապերախտ, խստասիրոտ, ամփոփել, դըժ-  
բախտ, խնդապին, անլիստահ :

23. Շեղագիր բառերուն ներհակի դրի եւ  
միասներն ալ յորնակի ըրի (Էջ 190).

1. Անախորժ յիշատակներ : 2. Անօգուտ մի-  
ջատներ : 3. Լայն կօշիկներ : 4. Անհաւատարիմ  
ծառաներ : 5. Խակ պատուղներ : 6. Ծեր փաստա-  
բաններ : 7. Տիտուր պատմութիւններ : 8. Անպատու-  
ծառներ : 9. Սնապարծ մարդեր : 10. Բարի աղաներ :  
11. Թաց լաթեր : 12. Նիհար կիներ : 13. Երիտա-  
սարդ դասատուններ : 14. Հուռ աղջիկներ : 15.  
Վատ գորականներ : 16. Հաստ ծղօտներ : 17. Մո-  
լի տղաներ : 18. Թթու ինձօրներ : 19. Մեղա-  
ւոր մարդեր : 20. Գեղեցիկ գէմքեր : 21. Անհաւ-  
ատա հիմեր : 22. Անմշակ արտեր : 23. Մութ  
սենեակներ : 24. Լայն անցքեր : 25. Զօրաւոր  
միտքեր : 26. Դժուար զաներ : 27. Թեթէ հիւան-  
միտքեր : 28. Թարմ հացեր : 29. Բարձր տու-  
գութիւններ : 30. Անօր ամպեր : 31. Սուր զմելիններ :  
32. Կոյր աչքեր : 33. Սիրելի վարքեր : 34. Լացող  
երախաններ : 35. Դանդաղ (անփոյթ) աշակերտներ:

**24.** Բառերուն հականիցները գտայ (Էջ 182).

Համակարծիք, խոռվութիւն, համեղ, պարսաւ, անմահ, անարժան, շքեղ, արի, հպարտութիւն, բղջախոնութիւն, անկասկած, մերժել, տիրիլ, անկարգ, գծուծ, վերջին, վսեմ, զատ, ամուսնացած, անմիտ, շինել, խոնարհ, փոքրոգի, գիտութիւն, ցորեկ, յիշել, առնել, սէր, ամբարիչա, հաստատուն (կայուն), ժամանում, անփորձ, նեղ, անհամբեր, պահանջք, մուտք, աւելնալ, տրտմիլ, կատակերգութիւն, թեթեւաբարոյ, անըզգայ, անբնական, պատասխան, վերցնել, օրնել, բերել, խաղաղութիւն, քնքուշ, յարձակիլ, լքել, ձախող, կորսնցնել, զրկուիլ, սասանել, կանգնում, հպատակիլ, կապել, հնազանդիլ (անսալ), ամբողջ, հոգեւոր, մեռնիլ, անսովոր, խիստ, հակակրութիւն:

**25. Ա.Ա.Դ.Ա.Տ.ՏՈՒԹԻՒՆ կամ ՆՄՍ.ՆՈՒԹԻՒՆ**  
Գիծերուն տեղ դրի պատշաճ բառը (Էջ 194).

Մեղուի պէս աշխատամեր . կրեսոսի պէս հարուստ . բարակի պէս արագընքաց . մարմարինի պէս պաղ . մեռելի պէս անշարժ . աւաղի պէս մանր . գառնուկի պէս անմեղ . ալիքի պէս փրփրած , յուզուած . կրիայի պէս դսնդաղ . Յովլէտի պէս զենեցիկ . ճպուռի պէս շատախօս , նապատակի պէս վախկոտ . մազի պէս բարակ . յարդի պէս թերեւ . Աբրահամի պէս աստուածավախ . Ներոնի պէս անգուր . Ճռւկի պէս համբ . սնդիկի պէս արագասան . երազի պէս վաղանցիկ . Եզուբոսի պէս տգեղ , կուզ . Կայէնի պէս անզուր . Վագրի պէս կատաղի , անազորյն : — պէս դիրաբրբոք . շանթի պէս արագ . Կովի պէս դանդաղ . ստուերի պէս թերեւ . տերեւի պէս դոդոջուն :

**26.** Ըեղագիր բառերուն ներհակը դրի (Էջ 196).

1. Հարսուրինենը առարինուրին չէ : 2. Աղքատուրինենը շուայլուրեան դուստրն է : 3. Զմեռը՝ արեւոտ տեղ կը վնտուոի : 4. Աստուած կը զանայ իր բարիքը մոլի մարդուն : 5. Մեր ատուած անձը առաւելուրին չ'ունենար : 6. Բարիները միշտ կանուխ կը մեռնին : 7. Շատ մարդիկ չար են : 8. Անաջառ ըլլանք ողջերուն նկատմամբ : 9. Առաւատուն արեւը կը ծագի : 10. Դժբաղդուրինենը կեանքը կը կարձէ : 11. Ծնունդը մեր կեանքին սկիզբն է : 12. Ծերուրինեն ետեն կը նայի : 13. Ծերուրինը դժբախտ է , վասն զի շատ գիտէ :

**27.** Ըեղագիր բառերուն ներհակը դրի (Էջ 198).

1. Բարի գործ մը կակուղ բարձի կը նմանի : 2. Արդարին բռւնը խաղաղ է : 3. Մարմինը կը հնագանի : 4. Պարաւաը կը զայրացնէ մեր հոգին : 5. Տզիտուրինը մտքին խաւարն է : 6. Բարիին բարեկամութիւնը զովեստ մ'է : 7. Եթէ չես գիտեր , լուկ : 8. Մարդո քիզ անգամ կը զզջայ լուերն : 9. Ատելուրինն ու վրեժինդրուրինը դժոխքն ելած են : 10. Մեղաւորին աղօթքն Աստուծոյ ատելի է : 11. Անպարկեշտ մարդոց երջանկութիւնը վաղանցիկ է : 12. Աշխատափրուրինն ու խնայուրինը յաջողուրեան (կանգնումի) Կ'առաջնորդեն :

**28.** Ըեղագիր բառերուն ներհակը դրի (Էջ 200).

1. Կը սիրեմ այն աշակերտը որ միշտ զբաղած , հոգածու և բարի է : 2. Այնպէս կը կարծէ թէ ժամերը խիստ արագ կ'անցնին , վասն զի աղեկ գործածուած ժամանակը կարմ կը թուի : 3. Դասսորվիլը հաճոյք կը պատճառէ անոր , աշխատու-

թիւնը հանգիստ մ'է անոր համար, ամէն բան դիւրին կ'երեւի 4. Ուստի իր ընկերները կը յարգեն զինքը, դասատուն կը վարձատրէ, մայրն ալ բարեխախտ է, որդիին այս լաւ վարժունքէն եւ շարունակ կը դրուատէ զայն : 5. Ապագային՝ խոնարին ու զիտուն մէկը պիտի ըլլայ, վասն զի խոնարիութեան սովորական ընկերն է զիտուրիւնը : 6. Կը հրանուիմ այսպիսի տղու մը վիճակին վրայ, և ո՞վ չպիտի հրանուեր, եթէ նկատէր թէ լաւ դաստիարակութիւն մը աղբիւր է առարինութեան և ծիւ ամէն բարփեներու :

Ծան. — Գ. Վարժութիւն էջ 201, Դաս 39 ի (ՃԱՐԴԻԿՈՒԹԻՒՆ և ԱՆՎԱԽՈՒԹԻՒՆ) Շեղագիր բառերուն հոմանիշը տես Սկզբունիք Համաձայնութեան, Ա. արև, 1894, էջ 79 :

#### 41. ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻՆ

( էջ 203 Աշակերտի Գիրին ):

Կետերուն տեղ իմաստին պահանջած բառերը դրի.

Անառակ որդին՝ ուղելով իր հայրենիքն հեռու զեղիս կեանք մը վարել՝ իր ժառանգութեան բաժինը առաւ և գնաց նեռաւոր երկիր մը: Հօն այսպիսի կեանք մը վարեց որ բոլոր ինչքը սպառեց և խեղձ մնաց :

Ուստի գնաց ուրիշ մարդու մը քով զործ զբանը, առ յետին թշուառութեան մէջ անոր խոնդերը կ'արածեր. և այս գարշելի անառաններուն կերած եղջեւրին ալ կարօւու կը քաշէր: Այս խեղճութեան մէջ միտքը բերաւ իր հօրը ծառաները, որոնք հանգիստ կեանք կը վարէին և բանի մը կարօւ չէին. ուստի նորէն ելաւ հօրը բով զնաց՝

մեղայ գոչեց և աղաչեց իր հօրը որ ընդունի զինք երր իր վարձկանելերն մեկը :

Ցիսուս այս առակը պատմեց ցուցնելու համար որ Աստուծին հեռացողը խեղճութեան մէջ կ'իշնայ: Բայց պէտք չէ յուսահատիլ: Աստուած կը ներէ անոնց որ սրտանց կը զղան :

#### 29. Առածները մեկնեցի (էջ 203) .

1. Ով որ իր գործը, պաշտօնը կամ տեղը չուտ չուտ կը փոխէ, անիկա չի կրնար հարատանալ: Աստանդական կեանք անցընողը հիմնական բան մը չի կրնար ընել :

2. Աղքատութեան մէջ եղողը ճար կամ նըպաստ կը վնասոէ :

3. Առանց աշխատութեան վայելք չ'ըլլար :

4. Եթէ մէկը քեզի նախատինք ընէ, մոռցի՛ր բայց եթէ բարիք ընէ, մի՛ մոռնար :

5. Մէկ անխելք աշակերտին ըրած յանցանքը՝ շատ մը խելացիներ դարմանելու կ'անձրկին, չեն յաջողիր: ( Զարիք հասցնելը աւելի դիւրին է քան չարիքի մը հետեւանքները ջնջել ) :

6. Ո՛ր և է գործէ կամ աշխատութենէ եթէ հեռանաս, անդին անկէ դժուարին կը հանդիպիս:

7. Բան գիտողը համեստ կ'ըլլայ: Արժանաւոր մարդը խոնարհամիտ կ'ըլլայ:

8. Քիչով սկսուած առուտուրը հետզհետէ մեծ ահ կուտայ:

9. Հագուստ փոխել դիւրին է, բայց գէշ քընութիւն մը փոխելն է դժուար: Մարդոց բնաւորութիւնը, նկարագիրը չի փոխուիր:

10. Աշխատող մարդը անօթի չի մնար, դըժբաղդ չ'ըլլար :

30. Առաջնաբան մեկնութիւնն է . ( էջ 208  
9. Վարժ. Մանկաց Ե. տիպ, 1900 ) :

1. Արտաքին երեւոյթով բարի՝ ներքնապէս չար:
  2. Դժուարաւ առիթ մը ձեռք անցընել և չօգ-  
տուիլ : ( Հազիւ հանգիստ ընելու ժամանակս է ,  
ան ալ դուն կը խանգարես ) :
  3. Քու չնորհներդ մեզի պէտք չեն , հեռացի՛ր  
մեզմէ , կ'ըսուի կեղծաւոր մարդուն :
  4. Ամէնէն խեղճը ան է որ արժանիք մը , գո-  
վելի կողմ մը չունի :
  5. Սիրտդ մի՛ բանար այն անձին որմէ օգուտ  
չես կրնար ունենալ :
  6. Խրտչեցաւ աշխատութենէն , բայց վայելքին  
մասնակից եղաւ :
  7. Զմածելով խօսողը՝ գէշ պատասխան կ'առնէ :
  8. Մարդ աշխատելու է , եթէ կ'ուզէ որ ա-  
ւելի շահի , հանգիստ ապրի : ( Արդիւնաւոր եղու-  
թը , պատիւ ու հարստութիւն կը գտնէ , կամ՝  
Աշխատասէր պաշտօնեայն ամսականի յաւելում  
կը ստանայ ) :
  9. Եթէ աղէկ ըլլալ կ'ուզես , ուրիշներուն  
գէշ մի՛ կամենար :
  10. Ուր որ գործի խաւնուող շատ կայ , գործ  
չի լմնար :

11. Քաղցրութիւնով աւելի կրնաս յաջողիւքան թէ խստութիւնով :

12. *Gymnopithecius* - *Saguinus* - *Callicebus* - *Alouatta*

0-2 ԱՐԴՅՈՒՆԱՎՈՐ ՀԱՅԵԼԵԼՈւ ալ իրաւունքունի :

Публичная библиотека



# ԴԱՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Հ Բ Ա Տ Ա Ր Ա Կ Ա Խ Ի Թ Ի Խ Ն Ե Բ Բ

		Գումեկան
1.	Ա. Վարժութիւն Մանկանց,	Իններորդ Տիպ 4
2.	Բ.      "      "	Վեցերորդ 5
3.	Գ.      "      "	Հինգերորդ 5
4.	Տաղրական Քերականութիւն	Հինգերորդ 2
5.	Լրացուցիչ Դասընթացք	Երրորդ 3
6.	Գունզ, աշխարհ, Հաւաք.	3
7.	Փաշակ, պատկերագարդ	Հինգերորդ 4 1/4
8.	Երկրորդ Փունչ "	Երկրորդ 6
9.	Կողմանակն Ընթացք Շար.	» 3
10.	Էմեալի Շարագրութեան	» 7
11.	Ըստելաբան Հայ լեզուի Զորրորդ	» 2
12.	Ակղբունք Համաձայնութեան և Շարագրութ.	3
13.	ALPHABET FRANÇAIS, Տիկին Սաթինի Բ. տիպ 2	
14.	Տարր. Ընթացք Կրօնի Վ. Ք. Ասլանեան Գ. տիպ 2	
15.	Պատկերազարդ Այբոքնարան (Նոր ոճով) Գ. տիպ 4/9	
— 100 Հ 25 դասեկան —		
16.	Ցայտագիր Դասեան Գործակալութեան Ե. տիպ 2	
17.	Ծալիարադ Հաւաքածոյ, Միջին շրջան Բ. » 4	
18.	Գորոցափառութիւն, գլու Emerson E. White 5	
19.	Առաջապատճեն	5
20.	Համ. Կրօնագիտութիւն, Ա. Հարէլեանի Բ. Տիպ 3	
21.	Մրտի Զայնը, Քերծուածներ, Ա. Դասեան	5
22.	Նուէր Հայ մանուկներուն, Ա. Դասեան	1 1/2
23.	Դաստիարակութիւն առջիներու,	3
24.	ՀՅՈՒՅ, Գիտութիւններու միայ դասեր .	3
25.	Դաստիարակութիւն պատմութիւններու,	3
26.	Բ/Բ/Բ/Ա/ Լրացիր, տարեկունք	50
27.	Աշխարհագրութիւն օմանեան կայուրութեան	2
28.	Քերթուածներ,	5
29.	Տից Կրօնագիտութիւնը ,	5
30.	Թուաբանութիւն մեզմական դրութեան	5
31.	Առաջնորդ Ավագ, լեզուի,	5
32.	Իվանեցին, Լօնկֆելո, Տ. Լ.	5
33.	Օմանեան Տաղաչափութիւն,	5
34.	Նոր Դարոց, 10 Պրովը	35
35.	Երջարերական Շամուշացիր «Նոր Գորոցի»	5
36.	Լրականար զրացուցուկ,	5
37.	Ռազմկարոզ Քրիստոնէական վարդապետութեան	4
38.	Հանդիսարան Բարյուգիտութեան	6
39.	Արտի խաղեր, Բ. Թերզեան և Տուինո	5
40.	Աղեցոց Գ. Վարժութեան	
41.	Իրազիտութիւն Համառա (մատմարզական ոճ)	3
42.	Nouvelle Méthode, II. Livre	4
43.	Բացարութիւն Ա. Պատմագի, Կրօն, Քահ.	5

Հասցե. ԱՄԲՈՅ ԴԱԿԹՈՒՅՆ

Խորասանեան խան, Միրքանի կ. Պոյիս

ՀՀ Ազգային գրադարան



NL0249727

9859